



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«ՐՀ» *Տարբերակ* 2023թ.

N ՄՈ / 77-Ն

ք. Արմավիր

«ԷԶՄԻԱԾՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՈՌ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 159-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածներով և 169-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ սահմանված N1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի ՄՄՈ/670-2021 որոշումը, «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գոռ Ասատրյանի 2023 թվականի մարտի 1-ի դիմումը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գոռ Ասատրյանին տրամադրել 2020-2021 թվականների աշխատանքային տարվա իր տեղափոխված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2023 թվականի մարտի 6-ից 21-ը ներառյալ՝ 11 աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:
2. Գոռ Ասատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի բուժական գծով տեղակալ Սերոբ Մանուկյանին:
3. Գոռ Ասատրյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի մարտի 22-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

03.03.2023

Է. ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ



VERIFIED OCSP 03.03.2023 17:06:56 GMT+4
Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505